Ժամկետանց թունաքիմիկատների պահեստավորում

Ոչ պիտանի թունաքիմիկատները (պեստիցիդները) պետք է պահվեն նախապես առանձնացված պահեստում:

Պահեստը բնակելի տարածքից պետք է գտնվի հիգիենիկ պահանջներին համապատասխան հեռավորության վրա, ունենա սանիտարական պաշտպանիչ գոտի և բարեկարգ ճանապարհներ՝ փոխադրամիջոցների համար:

Հիշե՛ք, որ ոչ պիտանի թունաքիմիկատների պահեստավորումը չպետք է ընդունվի ո՛չ որպես վերջնական, ո՛չ էլ որպես թափոնների կառավարման երկարաժամկետ լուծում:

Պահեստը պետք է լինի լավ օդափոխվող, լուսավոր, հատակը՝ ջրանթափանց և հեշտ մաքրվող, ունենա առանձին խցիկ՝ դյուրավառ նյութերի համար: Պահեստի տարածքը պետք է շրջապատված լինի 2 մ բարձրության ցանկապատով, ցանկալի է՝ վերնամասում փշալարի առկայությամբ:

Պահեստի տարածքի նկատմամբ շուրջօրյա հսկողություն իրականացնելու և կողմնակի անձանց մուտքը կանխելու համար պահեստը պետք է ունենա պահակակետ: Աշխատակազմի մուտքը տարածք պետք է իրականացվի անցաքարտերով, իսկ փոխադրամիջոցներինը՝ անցաթղթերով:

Ոչ պիտանի թունաքիմիկատների պահպանման օբյեկտը պետք է ապահովի դրանց անվտանգությունը մարդու առողջության և շրջակա միջավայրի համար և համապատասխանի հետևյալ պահանջներին՝

- պետք է ապահովված լինի հակահրդեհային պաշտպանության տեխնիկական միջոցներով և հրդեհի մարման միջոցներով (նաև պետք է ունենա կրակմարիչ, բահ, դույլ, քլունգ, ավազ),
- ներքին տարածքը պետք է ունենա բավարար մակերես՝ ամբարձիչ տրանսպորտային մեխանիզմների աշխատանքն ապահովելու համար,
- պետք է ունենա անձնակազմի տարհանման ուղիներ՝ ոչ պիտանի թունաքիմիկատների պահպանման ժամանակ առաջացած վթարային իրավիճակների, հրդեհի, տարածքի գազով լցվածության ու փոշոտվածության դեպքում մարդկանց անվտանգ տարհանումն ապահովելու համար,
- պետք է ունենա օդափոխության համակարգեր,
- պետք է ապահովված լինի կողմնակի անձանց մուտքը սահմանափակող հսկիչ համակարգերով՝ (ձայնային և լուսային ազդանշանային) և շուրջօրյա հսկողության տեսախցիկներով:

Կտրականապես արգելվում է պեստիցիդները պահպանել անմիջապես հատակի վրա: Վերափաթեթավորված պեստիցիդները պետք է պահվեն դարակների վրա, ընդ որում՝ դարակների և դարակաշարերի բարձրությունը պետք է համապատասխանի տարաների չափսերին:

Պահեստում պետք է լինեն հարմարանքներ՝ պեստիցիդների մեքենայացված բեռնման և բեռնաթափման համար, ինչպես նաև մեխանիզմներ՝ պահեստի ներսում թունաքիմիկատների փոխադրումների համար (սա բացառում է անձնակազմի անմիջական շփումը թունաքիմիկատի տարայի հետ և նվազեցնում ռիսկի գործոնը): Պահեստում պետք է լինեն գործիքներ՝ տարաները բացելու և փակելու համար, նաև կշեռք՝ անհրաժեշտության դեպքում թունաքիմիկատի քանակը որոշելու համար:

Պահեստում պետք է պահպանվեն՝

- միայն հայտնի բաղադրությամբ, պատշաճ փաթեթավորմամբ և չջնջվող մակնշմամբ թունաքիմիկատները (անպայման պետք է նշել թունաքիմիկատի դյուրավառ կամ պայթուցիկ հատկությունները, եթե դրանք առկա են), բացի այդ, յուրաքանչյուր թունաքիմիկատ պետք է ունենա արդիական անվտանգության անձնագիր,
- աղտոտված փաթեթավորման նյութերը (արկղեր, ցիստեռններ, թղթե տոպրակներ և այլն),
- անհատական պաշտպանության միջոցները:

Պահեստավորման ենթակա նյութերն անհրաժեշտ է տեսակավորել՝ ըստ իրենց ֆիզիկական վիճակի (պինդ, հեղուկ և այլ) և վտանգավոր հատկությունների (առաջին հերթին՝ առողջական հետևանքներ, դյուրավառություն, ցնդելիություն, ռեակտիվություն, քայքայունակություն, ջերմության/ցրտի նկատմամբ զգայունակություն): Անպայման պետք է իրականացնել պահեստ ընդունված և պահեստից դուրս հանված թունաքիմիկատների հաշվառում:

Այս պայմաններին չհետևելը զգալիորեն կմեծացնի թե՛ տեղափոխման և թե՛ միջանկյալ պահեստավորման ռիսկերը և չի համապատասխանի միջազգային լավագույն գործելակերպերին:

Գործատուի պատասխանատվությունը

Գործատուն իրավաբանական պատասխանատվություն է կրում իր աշխատակիցների առողջության, անվտանգության և շրջակա միջավայրի պաշտպանության համար: Հետևաբար, գործատուն պարտավոր է՝

- գնահատել պահեստի հետ կապված ռիսկերը, ձեռնարկել համապատասխան կանխարգելիչ գործողություններ, կանոնավոր կերպով վերահսկել դրանց արդյունավետությունն ու ապահովել դրանց իրականացումը,
- տեղեկացնել իր աշխատակիցներին ռիսկերի և կանխարգելիչ գործողությունների վերաբերյալ և ապահովել նրանց համապատասխան սարքավորումներով ու անհատական պաշտպանության միջոցներով,
- կազմակերպել աշխատակիցների վերապատրաստման դասընթաց:

Պահեստում աշխատող անձնակազմի առողջության պահպանմանը ներկայացվող հիգիենիկ պահանջները

Պահեստի անձնակազմը պետք է ապահովված լինի առանձին շինությունում տեղակայված հանգստի սենյակով, լվացարանով, զուգարանով, աշխատանքային արտահագուստից ազատվելու համար նախասենյակով, լոգարանով, և հագնվելու համար նախատեսված սենյակով: Շինության ներսում՝ առանձին պահարանում կամ դեղարկղում պետք է պահել առաջին բուժօգնության միջոցները:

Ոչ պիտանի պեստիցիդների հետ աշխատող անձնակազմը ենթակա է պարտադիր նախնական և պարբերական բուժզննության:

Անձնակազմի օգտագործած արտահագուստի վնասազերծումը, մաքրումը և լվացումը կատարվում է ամեն օր՝ աշխատանքի ավարտից հետո, աշխատանքի վայրում: Խստիվ արգելվում է արտահագուստը տուն տանելը, տնային պայմաններում մաքրելն ու լվանալը:

Անձնակազմը պահեստում ամեն օր իրականացնում է մշտադիտարկում, վերահսկում է պահեստի ջերմային ռեժիմը, անհրաժեշտության դեպքում օդափոխում կամ իրականացնում է ջերմակարգավորում: Սա նպաստում է տարաների հերմետիկության ապահովմանը և բացառում է թունաքիմիկատների արտահոսքը: Այսպես օրինակ, ցածր ջերմաստիճանում հեղուկ թունաքիմիկատը սառչում է, որի արդյունքում մեծանում է դրա ծավալը, ինչն էլ կարող է առաջացնել ճաքեր տարայի վրա, հետագայում թունաքիմիկատի հալչելը կհանգեցնի թունաքիմիկատի արտահոսքին և պահեստի աղտոտմանը: Նման դեպքում անհրաժեշտ է այն վերափաթեթավորել, պահեստը մաքրել, վնասազերծել և օդափոխել:

Աշխատակիցները պահեստում վերահսկողական կամ այլ բնույթի աշխատանքներ իրականացնելիս պետք է օգտագործեն անհատական պաշտպանիչ միջոցներ, իսկ աշխատանքներն ավարտելուց հետո պետք է դուրս գան պահեստի շինությունից՝ թունաքիմիկատների հետ շփման ռիսկերը նվազեցնելու նպատակով:

Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից՝ ՄԱԶԾ-ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի աջակցությամբ իրականացվող «Հանուն թույներից զերծ շրջակա միջավայրի՝ տեղական մակարդակից մինչև համընդհանուր» ծրագրի շրջանակում: